ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ապրիլի 2018թ. N 14-Ն

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2018թ-Ի ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՏԻՄ ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով, համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Համայնքի փոխադրամիջոցների գույքահարկի բազայի փոփոխությունների հետ կապված համայնքի տարեկան վարչական բյուջեի եկամտային և ծախսային մասերում կատարել հետևյալ փոփոխությունները՝
   ա. Վարչական բյուջեի եկամտային մասը՝ «Գույքահարկ փոխադրամիջոցների համար» (տող. 1121), ավելացնել 600,0 հազար դրամով
   բ. Վարչական բյուջեի պահուստային ֆոնդը ավելացնել 600,0 հազար դրամով:
2. Մայիսյան հերոսամարտերի միջոցառումների, օպերացիոն համակարգի տեխ սպասարկման ծառայության ինչպես նաև Հունան Ավետիսյան և Ջորավար Անդրանիկ փողոցների փոսալցման աշխատանքների կատարման ֆինանսավորման ծախսերը կատարել վարչական բյուջեի պահուստային ֆոնդից: Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 11 բաժնի 1 խմբի 2 դասի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4267 հոդվածը ավելացնել 150.0 հազար դրամ, 4234 հոդվածը սահմանել 35.0 հազար դրամ և 4251 հոդվածի սահմանել 350,0 հազար դրամ:
3. Գարեգին Նժդեհ փողոցի գլխամասում հենապատի տեղադրման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և հեղինակային հսկողության ծախսերի ֆինանսավորումը կատարելու համար բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները:
   Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջեին կատարել հատկացում 165,0 հազար դրամի չափով այն ուղղել բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 04 բաժնի 5 խմբի 1 դասի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման 5112 հոդվածին 150.0 հազար դրամ, 5112 հոդվածին (հեղ. հսկողություն) 7.0 հազար դրամ և 5133 հոդվածին 8,0 հազար դրամ:

Ավագանի՝
7 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայներով

16.04.2018

X

Գեղարքունիքի գյուղապետ Կ. Ասատրյան